

պատմէ իր վրայ պատահած : () ր մը անտառի մը մէջ խոտ քաղելու ելած ըլլալով՝ վեց գայլու ձագ կը գտնէ հազիւ դեռ ութ օրուան . անոնցմէ մէկը իրեն հետ կ'առնու տուն կը բերէ , և կը սկըսի ամենայն խնամքով սնուցանել . նախ միայն կաթ կը կերցընէ , ետքը կաթ և հաց , վերջն ալ ապուր . գայլը կը սկըսի ուժոյն ալ , և փայփայանք ու մեծ սէր տեսնելով տիրոջը կողմանէ՝ ձայնին մօտիկ կ'ընէ , կը լզէ զինքը ու բաւական հեռաւորութեամբ նետուած բան մը բերանը կ'առնու կը բերէ : Ս'ալմոն տը Պոմար վառեկի փորոտիք կերցընել կը փորձէ և կը տեսնէ որ ուրիշ ամէն տուած բաներէն աւելի ախորժով կ'ուտէ : Երկրորդ գիշերը Ս'ալմոն երազին մէջ ինքզինքը գայլերու ձեռք մատնուած տեսնելով՝ սաստիկ ցաւէ մը կ'արթննայ . և ինչ տեսնէ , իր սնուցած գայլը ազգը խածեր ու արիւնը կը ծծէր . շուտ մը կը ցատկէ ու մէկէն տնէն ալ կը վազնտէ . և վերջը կը լսէ որ անոր գազանութենէն խալտելու համար ստիպուեր են սպաննել զինքը :

Գայլուն բնութեանը վրայ գիտնալիք ուրիշ մանրամասն տեղեկութիւնները օրագրիս առջի տարիներէն մէկուն մէջ տուած ըլլալով , չենք ուզեր հոս անոնց կրկնութիւնն ընել . այլ որովհետեւ գայլն իր նենգաւոր և անգութ բնաւորութեանն համար ամենայն առակախօսաց ճոխ նիւթ մը եղած է , ընթերցողաց զուարճութեանն համար կ'ուզենք հոս մեր ազգային առակախօսներէն մէյմէկ ընտիր առակներ դնել , որոնք նաև ճաշակ մը թերևս կրնան ըլլալ երկու հեղինակաց ոճոյն զանազանութեանը :

Աղոռակ և Գայլն :

Դղուէսն ետես զպանիրն յորոգայթն , երթայ առ գայլն և ասէ . ո՛վ եղբայր , եկ առ զպանիրն և կեր . զի ուրբաթ է , և ես 'ի պաք եմ : Եւ եկն գայլն , և ջանայր առնուլ զպանիրն . և անկաւ

յորոգայթն , և թռեաւ պանիրն . և էաւ աղուէսն և սկսաւ ուտել : Եւ գայլն . վայ եղբայր՝ մի ուտեր . ուրբաթ է օրս՝ որ չբարկանայ քեզ Եստուած : Եւ ասէ աղուէսն ցգայլն , թէ ուրբաթն այդ է՝ որ 'ի պարանոցդ անկաւ . և այդ է բարկութիւնն Եստուծոյ : Եւ սկսաւ գայլն ցանձել յայտ կոյս և յայն կոյս : Եւ աղուէսն ասէ . ընդ նոյնդ և ես ցանձեցի երբեմն՝ և ոչ զերծայ : Եւ ասէ գայլն . վայ է ինձ՝ զի նեղիմ չարաչար : Եւ ասէ աղուէսն . ո՛վ եղբայր , դու չես վայ՝ մինչև գայ տէր որոգայթիդ :

Հուցանէ առակս , թէ զգաստ լեր որ չխաբիս 'ի նենգաւոր մարդկանէ , և յայնժամ վայ տառ անձին քո :

ՎԱՐԴԱՆ Ա. ԺԵ .

Երգիտ աղուէս զգայլ կուրացեալ , և եմուտ նմա առաջնորդ վարձուց աղագաւ . և 'ի միումաւուր գայթապղեցոյց 'ի ջուր յակամայ . և նա ոչ հաւատայր , այլ սպասէր վրէժ առնուլ . և երկուցեալ աղուեսուն կամէր փախչել , և ոչ կ'արէր՝ զի ըմբռնեալ ունէր . և ասէ . Ս'աղիւ զատիկ է , տարայց զքեզ յեկեղեցին՝ զի կերիցես մատաղ : Եւ ուրախ եղեալ գայլուն , և գնացին 'ի վաղուն . և տարեալ զնա՝ արկ շանց . և ասէ գայլն . Եւս է մատաղն ո՛չ չար սպասաւոր : Եւ նա ասէ . այդ է , զի այդպիսի չար կուրի , այդ՝ և ոչ այլ ինչ վայել է .

Իմանալի է զառակս , զի զըջացեալ նենգագործք և առաջնորդէն կուրաց . և թէ չարաբարոյք հրապուրեն զնոսա , յառաջինն դառնան նենգութիւն :

ՄԻԽԹԱՐ ԳՈՇ Ա. ԶԸ :

Սառոյց :

Ի ճերու ջրոց վերին կարգերը բարեխառնութե մեծամեծ փոփոխութիւններ կը կրեն . ամէնքը գիտեն որ ձմեռը կրնան պնդանալ ու սառիլ , ու ա-